Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

8395

ԿՈՒՍ-ՉՏՄԱՆ ՄԱՍԻՆ

(Համկոմկուսի (բ) ԿԿ և ԿՎՀ-ի վորոշումը կուս-զտման մասին 28-ի Ապրիլի 1933 թվի. և հրահանգը կուս-զտման մարզային շրջանային ու ստորին հանձնաժողովների մասին)։

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ЗКПЗ
Z-22

ԿՈՒՍ-ՀՐԱՏ. ● 1933 ● ԲԱԳՈՒ

34-И
Са 577
2 4 SEP 2006
ЗКПЗ
2-22
09 DEC 2009

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք!

ԿՈՒՍ-ԶՏՄԱՆ ՄԱՍԻՆ

(Համկոմկուսի (բ) ԿԿ և ԿՎՀ-ի վորոշումը Կուս-զտման մասին 28-ին Ապրիլի 1933 թվին և հրահանգ կուս-զտման մարզային շրջանային ու ստորին հանձնաժողովների մասին)։

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИСТОРИИ
Академии Наук
СССР

ԿՈՒՍ-ՀՐԱՏ.
ԲԱԿՈՒ — 1933

17.09.2013

8395

Հայերենը խմբագրեց Լ. Դանիելյան Թողարկու և սրբագիր Ա. Արխան

Հանձնված է տպագրության 27/X-33 թ. Ստորագրված է տպագրության 2/XI-33 թ. տպագրական նշանների թիվը 42.340 տպագրական թերթի թիվը 1¼

ՊԵՏԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՌ-Арм ССР
Ս. ԱՄ. Ա. Մանդելշտամ
59154.66

Baş Mətbəə, Mydiriliği Mühakkiliği № 6045
Sifariş № 1326 Tiraž 5000. format 84×110.
Azərnəşr mətsəəsi basıldı. Bakı. Əli Bajramov kycəsi, „Kitab Sarajı"

ԿՈՒՍ-ԶՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Համկոմկուսի (բ) Կենտկոմի վորոշումը 1933 թ. դեկտեմբերի 10-ին

Կուսակցության զտման մասին 16-րդ կուսկոնֆերանսի վորոշման հիման վրա (1929 թ. ապրիլ), Համկոմկուսի (բ) Կենտկոմը վորոշում է։

1. Կուսակցության անդամների և թեկնածուների զտումը անցկացնել 1933 թ. ընթացքում։

2. Սույն վորոշման հրապարակման օրից դադարեցնել թեկնածուների ընդունելությունն ու կուսակցության անդամ փոխադրելն ամբողջ ԽՍՀՄ—ում, թե քաղաքում և թե գյուղում։

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (բ) ԿԵՆՏԿՈՄ

ԿՈՒՍԶՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԿԿ(բ)ԿԿ ՑԵՎ, ԿՎՀ միացյալ պլենումի բանաձևը, ընդունված 1933 թվի հունվարի 12-ին

1. ԿԿ, և ԿՎՀ միացյալ պլենումը հավանություն է տալիս ԿԿ Քաղբյուրոյի վորոշմանը 1933 թ. ընթացքում կուսակցության զտումն անց կացնելու և մինչև զտման ավարտումն կուսաշարքերում ընդունելությունը դադարեցնելու մասին։

2. ԿԿ և ԿՎՀ միացյալ պլենումը հանձնարարում է ԿԿ Քաղբյուրոյին և ԿՎՀ նախագահությանը՝ կուսակցության զտման գործն այնպես կազմակերպել, վոր ապահովվի կուսակցության մեջ պրոլետարիատի յերկաթե կարգապահությունը և կուսակցության շարքերի մաքրումը բոլոր անվստահելի անկայուն և ոդոսկած տարրերից

ԿՈՒՍ—ԶՏՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՅԵՎ ԿՎՀ-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ 1933 Թ. 28-ԱՊՐԻԼԻ:

I

ԶՏՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Հնգամյակը չորս տարում կատարելը Խորհրդային Միության ինդուստրացման հաղթանակը, կոլխոզային շարժման հաջողությունները, բանվոր դասակարգի ահագին թվական աճումը առաջ բերին պրոլետարիատի և գյուղացիության ակտիվության նոր վերելք։

Այդ վերելքի հիման վրա կուսակցությունն իր շարքերը վերջին յերկու

և կես տարում ավելացրել է 1.400.000 հոգով, հասցնելով 3.200.000-ի (կուսակցության անդամ —2 միլիոն, թեկնածու—1.200.000 հոգի)։

Սակայն կուսակցության մեջ մասայորեն, տեղերում հաճախ գլխովին և առանց մանրակրկիտ ստուգման ընդունելություն կատարելով՝ խորթ տարրեր են խցկվել կուսշարքերը, վորոնք իրենց կուսակցության մեջ լինելն ոգտագործում են կարյերիստական մորթեպաշտական շահերի համար, խցկվել են յերկերեսանի տարրեր, վորոնք խոսքով յերդվում են կուսակցության հավատարիմ մնալու մեջ, գործով փորձում են նրա քաղաքականության կերպարանումը վիժեցնել։

Մյուս կողմից շնորհիվ կուսակցության անդամների մարքս-լենինյան դաստիարակության գործի անբավարար դրության, կուսակցության կազմի մեջ կան բավականաչափ ընկերներ,

վորոնք թեև ազնիվ, պատրաստ խորհրդային իշխանությունը պաշտպանելու, բայց կամ բավականաչափ կայուն չեն, չեն հասկանում կուսակցական դիսցիպլինայի պահանջների վոգին, կամ քաղաքականորեն կիսագրագետ են, չգիտեն կուսակցության ծրագիրը, կանոնադրությունն ու հիմնական վորոշումները, վորի պատճառով չեն կարողանում ակտիվ կերպով իրականացնել կուսակցության քաղաքականությունը։

Համկոմկուսի (բ) Կենտկոմի և ԿՎՀ-ի հունվարյան պլենումն այդ հանգամանքները հաշվի առնելով՝ վորոշել է 1933 թվին զտում կատարել և «կուսակցության զտման գործն այնպես կազմակերպել, վոր կուսակցության սեջ պրոլետարական յերկաթե դիսցիպլինան ապահովվի յեվ կուսակցության շարքերը զտվեն բոլոր անվստահելի, անկայուն յեվ ներս խցկված տարրե-

rից»: Միևնույն ժամանակ կուսակցությունը ղեկավարվել է Կոմինտերնի 1920 թվի հուլիսի 30-ի 2-րդ կոնգրեսի այն վորոշմամբ, վորի համաձայն «բոլոր յերկրների կոմկուսները, վորտեղ կոմունիստներն իրենց աշխատանքը լեգալ են տանում, պետք է կուսկազմակերպությունների անձնական կազմի պարբերական զտումներ (վերագրանցում) կատարեն, վորպեսզի կուսակցությունը սիստեմատիկ կերպով զտեն անխուսափելիորեն իրենց շարքերը խցկված մանր բուրժուական տարրերից»

Կոմինտերնի այդ հրահանգից յելնելով՝ մեր կուսակցությունը կուսակցական վերահաշվառում է կատարել 1920 թվին, կուսակցության զտում՝ 1921 թվին, վոչ արտադրական բջիջների զտում՝ 1924 թվին, գյուղական բջիջների ստուգում՝ 1925 թվին, զտում 1929—1930 թվին։ Ինչպես հայտնի է, այդ զտումներն ու վերահաշվառումներն ամրապնդել են մեր կուսակցության շարքերը, բարձրացրել նրա մարտունակությունը, ուժեղացրել կուսակցության յուրաքանչյուր անդամի պատասխանատվության զգացումը՝ կուսակցության աշխատանքի համար։

II

ԶՏՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՅԵՎ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ

Կուսակցության զտման խնդիրը կայանում է կուսակցության անդամների իդեոլոգիական մակարդակի բարձրացման, կուսակցության քաղաքական և կազմակերպչական ամրապնդման, անկուսակցական միլիոնավոր մասսաների վստահությունը դեպի կուսակցության հետագա ուժեղացման մեջ։

Զտման ժամանակ այդ խնդիրն իրականացվում է հետևյալ միջոցներով. ա) կուսկազմակերպությունների և կուսակցության անդամների բացարձակ

ազնիվ ինքնաքննադատությամբ. բ) յուրաքանչյուր կուսբջիջի աշխատանքի ստուգմամբ՝ կուսակցության վորոշումներն ու ցուցմունքները կատարելու տեսակետից. գ) զտման գործին ներդրավելով աշխատավոր անկուսակցական մասսաներն. դ) կուսակցությունից զտելով կուսակցության անդամության բարձր կոչումը չարդարացնող մարդկանց։

Կուսակցությունից վտարվում են.—

1) Դասակարգային խորթ և թշնամի տարրերը, վորոնք խաբեբայությամբ խցկվել են կուսակցության մեջ և մտում են այնտեղ կուսշարքերը քայքայելու նպատակով։

2) Յերկերեսանիները, վորոնք կուսակցությանը խաբելով են ապրում, նրանից թագցնում են իրանց իսկական ձգտումները և կուսակցությանը «հավատարիմ լինելու» սուտ յերդումով քողարկված՝ փորձում են իրականում

կուսակցության քաղաքականությունը վիժեցնել։

3) Կուսակցության և պետության յերկաթե դիսցիպլինայի հայտնի և գաղտնի խախտողները, վորոնք չեն կատարում կուսակցության և կառավարության վորոշումները, կուսակցության վորոշումներն ու սահմանած պլանները կասկածի յեն յենթարկում ու վարկաբեկում՝ նրանց «վոչ-ռեալ» և «անիրագործելի» լինելու մասին դատարկաբանելով։

4) Այլասերվածները, վորոնք հյուսվել են բուրժուական տարրերի հետ, չեն ցանկանում իրականում պայքարել դասակարգային թշնամիների դեմ, գործով չեն պայքարում կուլակային տարրերի դեմ, ռվաչների, լոդրների, գողերի, հասարակական սեփականությունը հափշտակողների դեմ։

5) Կարյերիստները, մորթեպաշտները, բյուրոկրատացած տարրերը,

որոնք կուսակցության շարքերում մնալն ու խորհրդային պետության ծառայելն իրենց մարթեպաշտական նպատակների համար են ոգտագործում. մասսաներից կտրված՝ նները, որոնք ար համարում են բանվորների և գյուղացիների կարիքներն ու պահանջները։

6) Բարոյապես քայքայվածները, որոնք իրենց տգեղ վարքով կուսակցության արժանապատվությունն են գցում, կուսակցության դրոշը կեղտոտում։

Նկատի ունենալով, որ վերջին ժամանակներս Համկոմկուսի (բ) շարքերը մտած անդամների թվում կան բանվոր դասակարգի գործին նվիրված ընկերներ, որոնք արտադրության մեջ կոլխոզներում իրանց նվիրվածությունն են ցույց տվել, սակայն չեն յուրացրել կոմկուսի յուրաքանչյուր անդամի համար ամենատարրական քաղաքական գիտելիքները —կուսակցության ծրագիրը,

կանոնադրությունը, կարևորագույն վորոշումները, կուսակցության Կենտրոնական Կոմիտեն և Կենտրոնական Վերահսկիչ Հանձնաժողովը հանձնարարում են այդպիսի կոմունիստներին զբաղման ժամանակ փոխադրել կուսակցության թեկնածու, վոչ իբրև կուսակցական պատիժ, այլ նրանց քաղաքական դաստիարակության և լավագույն պատրաստության նպատակով, վորպեսզի մի տարուց հետո նրանց նորից կուսակցության անդամ փոխադրելու հարցը դրվի, յեթե այդ մի տարում նրանք կարողանան կուսակցության անդամի համար անհրաժեշտ՝ իրանց քաղաքական գրագիտությունը բարձրացնել։

Նկատի ունենալով, որ նույն հանգամանքների հետևանքով կուսակցության թեկնածուների կազմի մեջ կան վոչ քիչ քանակությամբ ընկերներ, որոնք վոչ միայն թեկնածուի համար

անհրաժեշտ քաղաքական տարբական դիտելիքներ չունեն, այլ և անկայուն են և կուսակցական դիսցիպլինայի տեսակետից բավականաչափ տոկունություն չունեն, կուսակցության Կենտկոմն ու Կենտրոնական Վերահսկիչ հանձնաժողովը հանձնարարում են՝ զտման ժամանակ այդպիսի ընկերներին թեկնածուական կարգից փոխադրել համակրողների կարգը, վորպեսզի մի տարուց հետո նրանց նորից թեկնածու դարձնելու կամ թե կուսակցության անդամ ընդունելու հարցը դրվի, յեթե ստուգումը ցույց տա վոր նրանք դրա համար լիովին հասունացել են։

III.

ԶՏՄԱՆ ՈՒՂԻՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Զտումը—մեր կուսակցության բոլշեվիկյան ինքնաքննադատության արտահայտությունն է։ Դա պետք է կատարվի «առանց անձնավորություններին նայելու»։ Կուսակցության անդամների ու թեկնածուների կողմից կուսակցության կարևորագույն վորոշումներն իրականացնելու, սոցմրցությանն ու հարվածայնությանը մասնակցելու, արդիֆիկացիան, կարևորագույն տնտեսական առաջադրությունները կատարելու համար ակտիվ պայքար մղելու պրոդուլների դեմ, սոցիալիստական սեփականությունը հափշտակելու դեմ պայքար մղելու տեսակետից։

Զտման հանձնաժողովը պետք է կուսակցության բոլոր անդամներին կուսակցության ծրագիրը, կանոնադրությունը, կարեվորագույն վորոշումներն իմանալու պահանջը դնի։ Կոմունիստ չի կարող լինել այն ընկերը, վորը չգիտե կուսակցության ծրագիրն ու կանոնադրությունը և նրա կարեվորագույն քաղաքական և կազմակերպչական վորոշումները։ Սակայն զրա-

ման հանձնաժողովները չպետք է քաղաքական գրագիտության անհատական ստուգման ժամանակ ստուգվողին խրճճված, «բծախնդիր», «մոլորեցնող» հարցեր տան։ Նրանք պետք է ստուգվողի զարգացման ընդհանուր մակարդակը հաշվի առնեն, այնպես վոր կուսակցության սահմաններից դուրս չթողնելն այն ընկերները, վորոնք կուսակցության գործին և սոցիալիզմի շինարարությանն իրենց նվիրվածությունն են ապացուցել, բայց հնարավորություն չեն ունեցել բավականաչափ բարձրացնել քաղաքական գիտելիքների մակարդակը, մանավանդ բանվորներն ու կոլխոզնիկները։

Վոչ ստուգվողները, վոչ էլ ստուգողները զման վրա չպետք է նայեն վորպես կուսակցության կողմից տվյալ բջիջի կոմունիստներին ցույց տրվող գլխովին անվստահություն։ Զման հանձնաժողովները պետք է բոլոր մի-

59154-66

ջոցները ձեռք առնեն՝ զման ժամանակ ընկերական մթնոլորտ ստեղծելու, վորտեղ կուսակցության ամեն մի անդամը զգա թե բանը դատաստանի մասին չէ, այլ կուսակցությանն ոգնելու հայտնաբերելու, և արմատախիլ անելու կուսկազմակերպության բոլոր թերությունները։

Զման հանձնաժողովն ու կուսակցության բոլոր անդամները պարտավոր են վճռական հակահարված տալ նրանց, ովքեր կփորձեն զտումն ոգտագործել անձնական հաշիվներ մաքրելու, ոգտագործելու խմբակային պայքարի նպատակներով, բոլոր սկլոչնիկներին, բանսարկուներին ինչպես և նրանց, ովքեր կփորձեն անարգել կոմունիստին՝ կուսակցության գիծը հաստատուն տանելու, կուսակցական դիսցիպլինայի, խնայողության ռեժիմի արդիֆինպլանը կատարելու, հացամթերումները ժամանակին կատարելու, գար

ՄԵՍ ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ИНСТИТУТА
ZUUՈ-Арм ССР
Академии Наук

նանացանին, բերքահավաքին կանոնավոր պատրաստվելու, բերքը բաժանելու համար մղվող պայքարի համար, ինչպես և անարգելու այս կամ այն դեկավար ընկերոջը յենթարկված կուսակցականներին աշխատանքի ճշտության և հստակության վերաբերմամբ ցույց տված հաստատակամության համար։ Միևնույն ժամանակ պետք է վոչ պակաս վճռական հակահարված տալ նրանց՝ սկլոչնիկներին և կյաուզնիկներին, ովքեր կանարգեն այն բոլորին, վորոնք անկեղծորեն ձգտում են կուսակցությանն օգնել զտման ժամանակ յերեվան հանելու նրա շարքերում յեղած խորթ, անկայուն անվստահելի տարրերին ու մատնանշել այս կամ այն ընկերոջ կամ ամբողջ կազմակերպության աշխատանքում յեղած իսկական զանցառությունները, թերությունները, սխալները։

Պայքարելով կուսակցության անդամների կենցաղային քայքայման ու

անբարեմիտ վարմունքի դեմ (հարբեցողություն՝ կենցաղային քայքայում, կենցաղային կապակցություն խորթ տարրերի հետ, հակասեմիտականություն և նման յերևույթներ, վոր համատեղելի չեն կոմունիստի կոչման հետ)։ Զտման հանձնաժողովները վոչ մի դեպքում չպետք է թույլ տան անհատական կենցաղի մեջ մանր բծախնդրությունը։ Զտման հանձնաժողովն իր ուշադրությունը գլխավորապես պետք է դարձնի այն բանի վրա, թե կուսակցականն ինչպես է կատարում կուսակցության հանձնարարած գործը, ինչպես է նա պայքարում կուսակցության վորոշումներն իրագործելու և կատարելու համար։

Զտումը կատարվում է բջիջների դռնաբաց ժողովներում, ներդրավելով անկուսակցականներին (խոշոր բջիջներում ըստ ցեխերի, հերթափոխությունների, հիմնարկի առանձին մասերի,

կոլխոզների, սովխոզների և այլն)։ Ժողովներում նախապես լսվում ու քննարկվում են զտման հանձնաժողովի հաղորդումները՝ զտման նպատակների ու խնդիրների մասին և բջիջի բյուրոյի զեկուցումը՝ ստուգվող կազմակերպության վիճակի մասին։

Զտման յենթակա յեն կուսակցության բոլոր անդամները ու թեկնածուները՝ բացի Համկոմկոսի (բ) Կենտկոմի ու ԿՎՀ անդամներից ու թեկնածուներից, Համկոմկուսի (բ) Կենտկոմի ՎՀ անդամներից, վորպես կուսակցության համագումարի կողմից ընտրվածներ, այլ և ՄՏԿ ու սովխոզների քաղբաժնի պետերը, վոր կուսակցության կողմից արդեն ստուգման են յենթարկվել՝ նշանակվելու ժամանակ։ Սակայն յեթե այս կամ այն կուսակցական ժողովի, կուսակցականների առանձին խմբի կողմից պատճառաբանված դիմում լինի և Կենտկոմի, ԿՎՀ ու Վերբստուգիչ Հանձնաժողովի այս կամ այն անդամի կամ թեկնածուի, կամ ՄՏԿ ու սովխոզի քաղբաժնի պետի զտումը պահանջվի, ապա վերջիններս պետք է զտման յենթարկվեն։

IV

ԶՏՄԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Համամիութենական մասշտաբով զտման ղեկավարությունը հանձնարարվում է զտման կենտրոնական հանձնաժողովին, հետևյալ կազմով՝ ընկ. ընկ. Ռուձուտակ (նախագահ), Լ. Մ. Կագանովիչ, Կիրով, Յարոսլավսկի, Շկիրյատով, Յեժով, Ստասովա, Պյատնիցկի։

Զտման ղեկավարության համար յերկրային ու շրջանային կազմակերպություններում և ազգային հանրապետություններում զտման կենտրոնական հանձնաժողովի կողմից նշանակվում են

զման համապատասխան հանձնաժողովներ։

Զման շրջանային, յերկրային և հանրապետական հանձնաժողովները կազմակերպում են զման ռայոնական հանձնաժողովներ։

Զման շրջանային և ռայոնական հանձնաժողովներն ընտրվում են հեղինակավոր, բոլշևիկորեն կայուն, քաղաքականապես գրագետ, անցյալում ուրիշ կուսակցություններում չեղած, ոպոզիցիայում չեղած, դարբնված կոմունիստներից, վորոնք ամենաքիչը 10 տարվա կուսստաժ ունենան։

Զման հանձնաժողովի անդամների ցուցակը տեղական ժամուլում ժամանակին տպագրվում է, այնպես, վոր յեթե զման հանձնաժողովի անդամների նկատմամբ դիմում կամ առարկություններ լինեն, զման կենտրոնական հանձնաժողովը կարողանա քննել այդ դիմումները։

Համկոմկուսի (բ) անդամներն ու թեկնածուները, վոր անբավական են ճնում զման հանձնաժողովի վորոշումից, կարող են այդ վորոշումների դեմ բողոքարկել միամսյա ժամկետում զման վերադաս հանձնաժողովին, մինչև իսկ զման կենտրոնական հանձնաժողովին ու կուսակցության համագումարին, վորպես կուսակցության գերագույն որգանի։

Զման հանձնաժողովների աշխատանքները պետք է կատարվեն ամբողջ կուսակցության այդ թվում և ստուգվող կազմակերպությունների, մանավանդ կուսակցական մամուլի վերահսկողության տակ։ Ամեն մի բջիջ ընդհանուր ժողովում կարող է քննադատության յենթարկել զման հանձնաժողովի ամեն մի վորոշում և բողոքարկել նրա դեմ, սակայն դա չի նշանակում այդ վորոշման բեկանումը։ Զման հանձնաժողովի անդամները չպետք է մոռա-

նան, վոր ներկուսակցական դեմոկրատիայի խախտման համար, զտման ժամանակ կոպիտ ու անտակտ վերաբերվելու համար՝ հենց իրենք կուսակցական պատասխանատվության կենթարկվեն՝ վորպես զտումը վարկաբեկողներ։

Զտումը Մոսկվայի, Լենինգրադի, Ուրալի , Դոնեցի, Ոդեսայի, Կիյևի, Վիննիցկու շրջաններում, Արևելյան Սիբիրի ու Հեռավոր Արևելյան յերկրներում, Բելոռուսական հանրապետությունում սկսել հունիսի մեկից և ավարտել վոչ ուշ ընթացիկ տարվա նոյեմբերի վերջին։

Կուսակցության Կենտրոնական Կոմիտեն և ԿՎՀ հավատացած են, վոր կուսակցության բոլոր անդամները և ազնիվ աշխատավոր անկուսակցականները կմասնակցեն կուսակցության շարքերը անպետք ու խորթ տարրերից մաքրելու գործին, վոր կուսակցության զտումն ել ավելի սերտորեն կհամախմբի բանվորական ու կոլխոզային մասսաներին կուսակցության շուրջը, կուժեղացնի ու կամրապնդի կուսակազմակերպությունները, նրանց ել ավելի մարտունակ կդարձնի՝ 2-րդ հնգամյակի խնդիրներն իրագործելու մեջ։

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ.

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ (ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ) ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ.

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԶՏՄԱՆ ՄԱՐԶԱՅԻՆ, ՇՐՋԱՆԱՅԻՆ ՅԵՎ ՍՏՈՐԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻՆ

Կուսակցության զտման մասին Համ Կ (բ) ԿԿԿ-ի յեվ ԿՎՀ-ի 1933 թվականի ապրիլի 28-ի վորոշման հիման վրա՝ զտման կենտրոնական հանձնաժողովն առաջարկում է բոլոր կուսակցական կազմակերպություններին, զտման ընթացքում ղեկավարվել հետեվյալ ցուցմունքներով—

ԶՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Զտման յերկրային (մարզային ու հանրապետական) հանձնաժողովները

նշանակում են զտման շրջանային հանձնաժողովներ, ղեկավարում են նրանց աշխատանքները, զտման ընթացքում պարզաբանումներ ու խորհուրդներ են տալիս նրանց և քննության են առնում շրջանային հանձնաժողովների կայացրած վորոշման առթիվ ներկայացված բողոքները։

2. Զտման շրջանային հանձնաժողովները կազմվում են յերեք անդամից՝ ինչպես քաղաքային շրջանների, այնպես և գյուղական շրջանների համար։

3. Այն շրջաններում, ուր կուսակցության անդամների թիվը 500-ից չի անցնում, զտումը կատարվում է անմիջականորեն շրջանային հանձնաժողովների կողմից։ Իսկ այն շրջաններում, ուր կուսակցության անդամների թիվն անցնում է 500-ից, շրջանային հանձնաժողովների կողմից կազմվում են բջիջային հանձնաժողովներ՝ յերեք անդամից, այնպես վոր յուրաքանչյուր

բջիջային հանձնաժողով ընդգրկի վոչ պակաս, քան 100 կուսակցության անդամ ու թեկնածու։

Բջիջային հանձնաժողովների նախագահները հաստատվում են մարզային հանձնաժողովի կողմից։

4. Խոշոր ձեռնարկություններում, վորոնք ունեն 2000 և դրանից ավելի կուսակցության անդամ ու թեկնածու՝ համախմբելով մի քանի ցեխային բջիջներ, զտման մարզային հանձնաժողովները կազմում են զտման համագործարանային հանձնաժողովներ՝ շրջանային հանձնաժողովների բոլոր իրավունքներով։ Համագործարանային հանձնաժողովներին իրավունք է վերապահվում ստեղծել ցեխային և բջիջային հանձնաժողովներ, վորոնց նախագահները հաստատվում են մարզային հանձնաժողովների կողմից։

5. Զտման հանձնաժողովները (մարզային, շրջանային և բջիջային) իրավունք ունեն վորոշումներ կայացնել կուսակցությունից վտարելու, կուսակցության անդամներին, թեկնածու փոխադրելու և թեկնածությունից համակրող դարձնելու վերաբերյալ։ Հանձնաժողովները չեն լուծում աշխատանքից հանելու կամ մի աշխատանքից մյուսը փոխադրելու հարցեր։

6. Զտման բջիջային հանձնաժողովների կազմում ընտրվում են հեղինակավոր, քաղաքականապես զրագետ, կայուն, անցյալում վորևե այլ կուսակցության չպատկանող, ոպոզիցիայում չեղած կուսակցության անդամներ՝ վոչ պակաս քան յոթ տարվա կուսակցական ստաժով։

7. Զտման շրջանային հանձնաժողովների անդամները, նախ քան զտման աշխատանքներին անցնելը, պետք է իրենք ստուգման յենթարկվեն իրենց բջիջների դռնաբաց ժողովներում, վորոնք անց են կացվելու ժարզային

հանձնաժողովի անդամների կողմից։
Նույն ձևով եվ բջջային հանձնաժողովի անդամները, նախ քան զտման աշխատանքներին անցնելը պետք է ընտրման յենթարկվեն իրենց բջիջների դռնաբաց ժողովներում, վորոնք անց են կացվելու շրջանային հանձնաժողովի անդամների կողմից։

8. Զտման հանձնաժողովները իրավունք ունեն իրենց ոգնելու նպատակով աշխատանքի ներգրավել կուսակցության անդամներին, ինչպես բջիջներն ամբողջությամբ վերցրած հետազոտելու, այնպես և զտման յենթարկվող առանձին կուսակցականների մասին յեղած տեղեկություններն ստուգելու ուղղությամբ՝ առանձին հանձնարարություններ կատարելու համար։

9. Կենտրոնական հանձնաժողովը բոլոր մարզային հանձնաժողովների ու բոլոր կուսակցական կազմակերպությունների ուշադրությունն է հրավիրում այն բանի վրա, վոր կուսակցության զտումը հաջողությամբ անցկացնելու գործում վճռական նախապայման է հանդիսանում ինչպես շրջանային ու բջջային հանձնաժողովների անդամների, այնպես և հատկապես նրանց նախագահների ուշադիր ու բարձրորակ ընտրությունն կատարելը։ Զտման հանձնաժողովների անդամների նախնական ընտրության ու նրանց ուսումնասիրման գործով պետք է զբաղվեն զտման մարզային ու շրջանային հանձնաժողովի նախագահներանձամբ, կուս. կոմիտեների քարտուղարների ու վերահսկիչ հանձնաժողովների նախագահների ակտիվ ոգնությամբ։ Մարզային և շրջանային հանձնաժողովները չպետք է հաստատեն շրջանային ու բջջային հանձնաժողովների և վոչ մի անդամի, առանց մարզային կամ շրջանային հանձնաժողովի հաստատվելիք անդամների հետ նախապես ծանոթանալու ու նրանց հետ անձնապես զրույց ունենալու։

II.

ԶՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

10. Զտման շրջանային հանձնաժողովները սահմանում են առանձին բջիջներում զտումն անցկացնելու հերթականությունն ու ժամկետները, զտման բջիջային հանձնաժողովների քանակը և կազմակերպման ժամկետը վորոշակի բջիջների նկատմամբ։

11. Մինչև զտումն սկսելը, բոլոր կուսակցական բջիջները պետք է լայն բացատրական աշխատանք ծավալեն բջիջի ներսում զտման խնդիրների վերաբերյալ և պատրաստեն իրենց բջիջի անդամների բնույթագիրը ավող բոլոր նյութերը, մասնավորապես այն նյութերը, վորոնք պարզաբանում են բջիջի այս կամ այն անդամի հանցագործ արարմունքը և վորոնց հիման վրա տվյալ բջիջի անդամները կուսակցական տույժի յեն յենթարկվել։

12. Զտմանը նվիրված բջջային ժողովներում պետք է լայն կերպով ներգրավվեն այն ձեռնարկության, հիմնարկի, խորհրդատեսության ու կոլտնտեսության անկուսակցական բանվորները, աշխատավորները, գյուղացիներն ու ծառայողները, վորի բջջի անդամներն ստուգման են յենթարկվում։

13. Յուրաքանչյուր կոմունիստի զտումն անցնում է այն բջջում, ուր նա մուծում է իր անդամավճարները և վորտեղ նա մշտական հաշվառման է յենթարկված (վորտեղ գտնվում է նրա հաշվառման քարտը)։ Կուսակցության բոլոր անդամների ու թեկնածուների համար պարտադիր է ներկայանալ հանձնաժողովի պահանջով։ Յեթե կուսակցության մի վորևե անդամ կամ թեկնածու հարգելի պատճառով (գործողում, հիվանդություն և այլն) նշված ժամկետին չի կարողանում ներ-

կայանալ հանձնաժողովին, զատումն անց նելու համար, այդ դեպքում նա պետք է զտման յենթարկվի առանձին աշխատանքի վայրը վերադառնալուց հետո՝ զտման հանձնաժողովի կողմից։

14. Կուսակցության յուրաքանչյուր անդամ և թեկնածու զտման հանձնաժողովին հաղորդում է իր համառոտ կենսագրությունը և տեղեկություններ իր անցյալ և ներկա աշխատանքի վերաբերյալ։

15. Բջիջի զտման ամբողջ աշխատանքն ավարտելուց հետո, զտման բջիջային հանձնաժողովը բջիջի ընդհանուր ժողովում հաղորդում է զտման յենթարկված կոմունիստների վերաբերմամբ ընդունված վորոշումները, հաղորդում է բջիջի վիճակի ու աշխատանքի գնահատականը, ինչպես և հանձնաժողովի յեզրակացությունները թերություններն ուղղելու մասին։

16. Բջիջում յեզրափակման ժողովը վերջանալուց հետո, զտման բջիջային հանձնաժողովը զտման շրջանային հանձնաժողովին գրավոր հաշվետվություն է ներկայացնում յուրաքանչյուր առանձին բջիջում իր կատարած աշխատանքի արդյունքների մասին, ինչպես և ներկայացնում է շրջանային հանձնաժողովին ի հաստատություն իր վորոշումները կուսակցությունից վտարելու, թեկնածուներին համակրողների փոխադրելու մասին։

17. Զտման բջիջային հանձնաժողովների վորոշումները կուսակցությունից վտարելու և թեկնածուներից համակրողների փոխադրելու մասին, պետք է ճշտիվ հիմնավորված լինեն։ Անհրաժեշտ է հակիրճ, բայց ճշտիվ մատնանշել, թե ինչ փաստերով է ապացուցված մեղադրանքը և բացասական բնութագրումը։ Արձանագրությանը պետք է կցված լինեն այն փաստաթղթերը,

վորոնք հաստատում են արձանագրության մեջ մտցված մեղադրանքները և բացասական բնութագրումները, իսկ այդպիսի փաստաթղթեր չլինելու դեպքում պետք է մատնանշված լինի, թե ում բերանից է գրի առնված մեղադրանքը, ով և ինչպես է ստուգել վերջինս։ Կուսակցությունից վտարված կամ համակրողների փոխադրված անդամների մասին պետք է հաղորդել անկետային հիմնական տեղեկություններ (կուսակցական ստաժը, տարիքը, սոցիալական ծագումը, կրթությունը, զտման պահին նրա կատարած աշխատանքը, Կարմիր բանակում գտնվելու տևողությունը, արդյոք սպիտակ բանակում ծառայել է, մոբիլիզացիայի կարգով, թե կամավոր կերպով, ինչով է զբաղվել մինչև 1917 թվականը, պատկանել է արդյոք ուրիշ կուսակցություններին, վորքան ժամանակով, յեղել է արդյոք ոպոզիցիայի շարքերում,

մասնակցել է արդյոք ֆրակցիոն աշխատանքի, յենթարկվել է կուսակցական պատասխանատվության, ինչով է զբաղվել վերջին 2—3 տարում) ինչպես և այն տվյալները, վորոնք վերաբերում են անդամի կամ թեկնածվի մասնակցությանը՝ կուսակցական ու հասարակական աշխատանքին։

18. Բոլոր կուստոմսերը և թեկնածուական քարտերն ստուգվում են այն տեսակետից, թե վորքա՞ն ճիշտ են նրանց մեջ արձանագրված տեղեկությունները։ Կուս և թեկնածուական տոմսերը հետ են վերցվում այն կոմունիստներից, վորոնց վտարումը կուսակցությունից հաստատել են զտման շրջանային հանձնաժողովները։ Համակրողի փոխադրվածը ստանում է համակրողի քարտ։

III

ԶՏՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ.

19։ Կուսակցական տույժ ստացած (վտարումը կուսակցությունից, փոխադրումը թեկնածվի և հատակրողի) կուսակցության ամեն մի անդամ կամ թեկնածու իրավունք ունի մի ամսվա ընթացքում զտման բջիջային հանձնաժողովի վորոշման դեմ բողոք տալու շրջանային հանձնաժողովին։ Յեթե կուսակցության տվյալ անդամը կամ թեկնածուն չի բավարարվում շրջանային հանձնաժողովի վորոշումով, նա բողոքարկում է այդ վորոշման դեմ զտման յերկրային (մարզային կամ հանրապետական) հանձնաժողովին, յերկրային (մարզային կամ հանրապետական) զտման հանձնաժողովի վորոշման դեմ՝ իր

հերթին զտման կենտրոնական հանձնաժողովին, կենտրոնական հանձնաժողովի վորոշման դեմ՝ Համ. Կ (բ) Կ-ի 17-րդ համագումարին, վորպես կուսակցության բարձրագույն որգանի։ Մարզային ու կենտրոնական հանձնաժողովների դեմ բողոքները պետք է տրվեն Համ. Կ (բ) Կ-ի 17-րդ համագումարի գումարումը հայտարարվելու որից վոչ ուշ։

20) Զտման հանձնաժողովները պարտավոր են զտման ժամանակ վտարվածների բողոքները, տվյալ ընկերների զտմանը վերաբերյալ բոլոր գործերի ու բոլոր նյութերի հետ միասին, անհապաղ ուղարկել զտման բարձրագույն հանձնաժողովին, վորտեղ ուղարկվում է նաև տվյալ բողոքը։

21. Զտման բջիջային հանձնաժողովների վորոշումները կուսակցությունից վտարելու կամ թեկնածուներից հատակ բողների փոխադրելու մասին, ուժի

մեջ են մտնում այն պահից, յերբ հաստատվում են զտման շրջանային հանձնաժողովների կողմից։ Զտման շրջանային հանձնաժողովի վորոշումից հետո, վտարվածը կորցնում է կուսակցության անդամի կամ թեկնածվի իր իրավունքները, մինչև՝ վոր այդ վորոշումը վերացնի զտման վերադաս հանձնաժողովը։

22. Շրջանային հանձնաժողովները, հաստատելով զտման բջիջային հանձնաժողովների արձանագրությունները, կարող են վերանայել կուսակցության այս կամ այն անդամի վտարմանը վերաբերյալ վորոշումները, անկախ նրբանից, թե տվյալ ընկերները բողոքարկումներ տվել են թե վոչ, յեթե այդ վորոշումները բավականաչափ հիմնավորված չեն, կամ յեթե զտման ժամանակ խախտվել են Կենտկոմի ու ԿՎՀ-ի վորոշումներր զտման մասին և ներկա հրահանգը։ Այդ դեպքում գործն անպայման վերանայվում է զտման բջջային հանձնաժողովի նախագահի կամ անդամի և վտարման յենթարկվածի ներկայությամբ։ Զտման շրջանային հանձնաժողովների վորոշումների դեմ զտման յերկրային (մարզային կամ հանրապետական) հանձնաժողովին տրված բողոքների քննումը կատարվում է բողոքարկվի ներկայությամբ կամ հանձնաժողովը մեկնում է տեղերը։

23. Յեթե զտման հանձնաժողովը համաձայն չէ իր վորոշման վերացմանը, վերադաս հանձնաժողովի կողմից, նա իրավունք ունի բողոքելու վերջինիս վորոշման դեմ վերադաս հանձնաժողովին (բջջային հանձնաժողովը շրջանային հանձնաժողովի վորոշման դեմ բողոքում է յերկրային հանձնաժողովին, շրջանային հանձնաժողովը յերկրայինի դեմ՝ կենտրոնական հանձնաժողովին)։

ՀԱՄԿ(բ)Կ-Ի ԶԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՀՍՍՄ-Арм ССР
им. А. Мясникяна

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ Ազգային գրադարան
NL0186640

12 4
1014
975
34-И
Са 577

FIRQƏNIN TƏMIZLƏNMƏSI HAQQЫNDA

(YIQ(B)F MQ. və MQQ-nin 1933-cü il 28 aprel qərarы və oblast, rajon aşaqы firqətəmizlənməsi komisjalarыna tə'limat)

FIRQƏNƏŞR — 1933 — BAKЫ